ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/45

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ
Մասնակից՝ «Մեգիէլ» ՍՊԸ
ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ

Մասնակցությամբ՝
«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝ Տ. Ջիլավյանի, Հ. Ավշարյանի,
«Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Սարգսյանի,
ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչ՝ Լ. Վարոսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով բաց մրցույթ, բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների

նախարարության կողմից 16.02.2021թ.-ի թիվ 26/26/2126-2021 գրությամբ «Մեգիէլ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 11.02.2021թ.-ի թիվ 08-92 գրության հիման վրա, 16.02.2021թ.-ին «Մեգիէլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 16.02.2021թ.-ին:

16.02.2021թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2021/45 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

25.02.2021թ.-ին, 02.03.2021թ.-ին, 10.03.2021թ.-ին, 16.03.2021թ.-ին և 18.03.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 16.03.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 18.03.2021թ.-ին:

2. «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն 11.02.2021թ.-ի թիվ 08-92 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում

«Մեգիէլ» ՍՊԸ-ին ներառելու նպատակով, Ձեզ ենք տրամադրում հետևյալ տեղեկությունները.

Բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 26.11.2020թ. <<Նորք-Մարաշ> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն հայտարարել է ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20 ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ): Ընթացակարգի 3-րդ չափաբաժնով նախատեսված է <<Օքսիգենատոր մեծահասակի>> ապրանքը, իր համապատասխան տեխնիկական բնութագրերով: Մրցույթի նշված չափաբաժնին մասնակցել է նաև <<Մեգիէլ>> ՍՊԸ-ն, առաջարկելով հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող բնութագրով ապրանք:

08.02.2021թ.-ին գնահատող հանձնաժողովի նիստին արձանագրվել է մասնակցի հայտի անհամապատասխանություններ հրավերի պահանջներին: Օրենքով նախատեսված կարգով և ժամկետներում ընկերությունից պահանջվել է տեխնիկական բնութագրերի շտկում: Ընկերության կողմից ներկայացվել է գրություն, սակայն անհամապատասխանությունների շտկում չի իրականացվել: Արդյունքում ընկերության հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Մեգիէլ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 17.02.2021թ.-ին գրությամբ դիմել է «Մեգիէլ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.02.2021թ.-ի թիվ 26/26/2126-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

15.03.2021թ.-ին ներկայացնելով գրավոր դիրքորոշում՝ Մասնակիցը հայտնել է հետևյալը.

«ՀՀ ֆինանսների նախարարության գրության հիման վրա «Մեգիէլ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով 16.02.2021թ հարուցված ՍՅ-ԼՕ-2021/45 ընթացակարգի վերաբերյալ հայտնում ենք հետեւյալը.

ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20 ծածկագրով գնման ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով Ընկերությունը մրցույթին մասնակցել է համարժեք ապրանքով, քանի որ Պատվիրատուն տեխնիկական բնութագրով հղում էր արել ֆիրմային անվանմանը եւ ձեռք բերվող մոդելին:

Գնահատող հանձնաժողովը 09.02.2021թ թիվ 8 արձանագրության 1-ին մասով արձանագրել է տեխնիկական ցուցանիշների անհամապատասխանություն, որոշել է Ընկերության հայտը 3-րդ չափաբաժնով գնահատել անբավարար եւ մերժել հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20 ծածկագրով մրցույթի 3-րդ չափաբաժնի մասով 11.02.2021թ բողոք էր ներկայցվել գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, որը քննվել է ԳԲՔԱ-ԼՕ-2021/07 ծածկագրի ներքո եւ 05.03.2021թ կայացվել է որոշում:

Բողոքով հարցադրում էր ներկայացվել արդյո՞ք գնահատող հանձնաժողովը Ընկերության հայտը 3-րդ չափաբաժնով ապրանքի համարժեքությունը գնահատել է նպատակին ծառայելու կամ որոկական հատկանիշներից ելնելով, թե զուտ համեմատություն է անցկացրել ինչ-որ թվային չափորոշիչների, որն ապահովում է բացառապես Horizon AF Plus ապրանքատեսակը:

Ներկայացված հարցադրման պատասխանը չի տրվել ո՛չ Պատվիրատուի եւ ո՛չ էլ բողոքի արդյունքում կայացված որոշմամբ:

Եթե գնահատումը համեմատության մեջ է արվել Horizon AF Plus ապրանքատեսակի հետ, բնականաբար Ընկերության ներկայացրած ապրանքատեսակը չէր կարող նույնականանալ Horizon AF Plus ապրանքի հետ: Սակայն, քանի որ ընթացակարգի 3-րդ չափաբաժնով հայտը ներկայացվել է որպես համարժեք ապրանք, ապա գնահատող հանձնաժողովը համարժեքությունը պետք է գնահատեր բժշկական պարագայի գործարկման արդյունքում նպատակային նշանակության արդյունքին հասնելու որակական հատկանիշներից եւ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ եւ օգտավետ իրականացման նպատակից ելնելով, հաշվի առնելով՝ Horizon AF Plus ապրանքն իր որակական հատկանիշներով մի քանի աստիճանով զիջում է Ընկերության առաջարկած համարժեք ապրանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ ենթակետի համաձայն մասնակիցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, Մասնակիցը մրցույթին մասնակցել է համարժեք ապրանքով, ինչը ենթադրում է, որ չեն բացառվել Հրավերով ներկայացրած տեխնիկական բնութագրի որոշ չափորոշիչներից շեղում: Տեխնիկական բնութագրից որոշ շեղումներ միանշանակ լինելու էին համարժեք ապրանքի դեպքում, քանի որ տեխնիկական բնութագրով ներկայացված է Horizon AF Plus ապրանքի բնութագիրը եւ այլ արտադրող, բացառապես նույնական չափորոշիչներով, չի արտադրում (այնուամենայնիվ Պատվիրատուն բողքների քննության ընթացքում չի ներկայացրել վերաբերելի ապացույց հակառակը փաստելու նպատակով):

Ընկերությունը ստանձնել է մրցույթին մասնակցել համարժեք ապրանքով, ուստի եւ ներկակայցրել է համարժեք ապրանք: Ընկերությունը չի ստանձնել պարտավորություն մասնակցել ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20 ծածկագրով մրցույթի 3-րդ չափաբաժնով պահանջվող Horizon AF Plus ապրանքատեսակով:

Այսպիսով, մասնակիցը չէր կարող ենթադրել, որ գնահատող հանձնաժողովը ձեռք բերվող ապրանքի համարժեքությունը գնահատելու է ոչ թե բուժ պարագայի գործածության արդյունքում նպատակին հասնելու անհրաժեշտությունից, ինչպես նաեւ որակական հատկանիշներից եւ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ եւ օգտավետ իրականացման նպատակից, այլ զուտ, որեւէ հետեւանք չառաջացնող, թվային նախապայմաններից:

Հարկ եմ համարում դիտարկել, «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության գնահատող հանձնաժողովի գնահատման մոտեցումներից ելնելով, որեւէ մասնակից համարժեք ապրանքով մրցույթներում հաղթող չի կարող լինել, ուստի եւ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով համարժեք ապրանքով հանդես գալու օրենսդրի կողմից սահմանված հնարավորությունը իմաստազրկվում է, մինչդեռ՝ օրենսդիրը համարժեք ապրանքով հանդես գալու հնարավորությունը դիտարկելով միտում է հետապնդել ապահովել մրցակցային, թափանցիկ ոչ խտրական հիմունքներով, ընտրության լայն հնարավորություն ունենալու, տնտեսող, արդյունավետ եւ օգտավետ գործընթացի կազմակերպում:

ՀՀ սահմանադրության 28-րդ հոդվածի համաձայն՝ բոլորը հավասար են օրենքի առջեւ:

ՀՀ սահմանադրության 59-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները եւ կարգը սահմանվում են օրենքով:

2. Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները եւ դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով:

3. Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը եւ հակամրցակցային համաձայնություններն արգելվում են:

11.02.2021թ բողոքի քննության արդյունքում 05.03.2021թ թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/07 որոշմամբ թեեւ բողոքը մերժվել է, սակայն բողոք քննող անձն արձանագրել է, որ այնուամենայնիվ թույլ են տրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի դրույթների եւ ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշման պահանջների խախտումներ:

ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20 ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից, ի թիվս այլի, խախտվել է նաեւ ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 26-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջը, համաձայն որի՝ նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում եւ արձանագրվում են, եւ յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները եւ քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը:

«Նորմատիվիրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է, եթե իրավական ակտում՝

1) նշված նորմի կիրառումը պայմանավորված է միայն «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով, կամ

2) նշված նորմի կիրառումը պայմանավորված է միայն ստորակետերով բաժանված պայմաններով, կամ

3) նշված նորմի կիրառումը պայմանավորված է ստորակետերով և «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով:

Այսպիսով, 526-Ն որոշման 26-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված է տեսաձայնագրության եւ արձանագրության կամ ձայնագրության եւ արձանագրության պարտադիր առկայությունը:

Պատվիրատուն 24.02.2021թ 08-114 գրությամբ հայտնել էր, որ չի կարող ներկայացնել ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20 ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի որեւէ նիստերի տեսաձայնագրություն եւ/կամ ձայնագրություն:

Պատվիրատուի բոլոր վկայակոչումները հանձնաժողովի օրինական գործունեության մասին դառնում են առարկայազուրկ, մտացածին, եթե առկա չեն տեսագրություններ կամ ձայնագրություններ: ՀՀ կառավարությունը 526-Ն որոշմամբ ինքնանպատակ չի սահմանել այդ պարտադիր կանոնի պահպանումը, այդ կարգի գոյությունը միտված է հիմնավորելու գնահատող հանձնաժողովի օբյեկտիվությունը, օրենքով առաջնորդվելու հավաստումը:

Տնտեսվարող սուբյեկտներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում անհիմն, միտումնավոր ներառելու արդյունքում ապահովելու են մրցակցության սահմանափակումը, մենաշնորհը, գերիշխող դիրքը, անբարեխիղճ մրցակցությունը կոնկրետ պատվիրատուի նախընտրած սուբյեկտի բիզնես գործունեությունը բարելավելու նպատակով:

Այսպիսով, Ձեր վարույթում քննվող ՍՅ-ԼՕ-2021/45 ընթացակարգով «Մեգիէլ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը բացակայում են, ուստի՝ խնդրում ենք մերժել հարուցված ընթացակարգը:»:

4. <u>Ընթացակարգի կողմ՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը.</u>

Ընթացակարգի քննության ընթացքում, Մասնակցի 10.03.2021թ.-ի միջնորդության հիման վրա, Բողոքներ քննող անձի 11.03.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/3471-2021 գրությամբ՝ որպես կողմ է ներգրավվել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը (այսուհետ նաև՝ Գրասենյակ):

Գրասենյակը, լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը հրավիրված նիստերին:

Գրասենյակի ներկայացուցիչը, ներկայանալով հրավիրված նիստին, ներկայացրել է բանավոր դիրքորոշում՝ անդրադարձ կատարելով «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով

հայտարարված գնման ընթացակարգին, նախաձեռնված ընթացակարգի իրավական և փաստական հանգամանքներին:

5. <u>ՍՑ-LO-2021/45 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 26.11.2020թ.-ին հայտարարվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ կամ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 11.12.2020թ.-ին ժամը 12:00-ը ներառյալ:

iii. Ընթացակարգի հրավերում ներառված պայմանագրի նախագծի հավելված 1-ի (այսուհետ նաև՝ Հավելված 1)՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 3-րդ չաւիաբաժնով սահմանվել է հետևյալ ապրանքը.

Օքսիգենատոր մեծահասակի	Եվրոսեթ Horizon AF Plus	Սրտի վիրաբուժության համար նախատեսված օքսիգենատոր գործարանային կոմպլեկտավորմամբ: Երակային մուտքի միացում պտտվող 360 աստիճան ½ դյույմ իր ադապտերով 3/8 դյույմ, երակի ելքի միացում 3/8 դյույմ, ռեզերվուարը 4500 մլ տարողությամբ, երեք տեսակի զտող համակարգ՝ երակային մուտքի զտում 80μm, արյուն/օդ մուտքի զտում 40μm, օդ/ արյուն զտում 40μm, ռեզերվուարը ամբողջությամբ ներսից PC (Phosphorylcholine) ծածկույթով՝ հարմարեցված VAVD- ի համար: Օքսիգենատորի տարողունակության ծավալը 225մլ, շփվող մասի արտաքին շերտը 1,65մ2 , մաքսիմալ արյան հոսքը 7,0 լիտր/րոպե, արտերիալ ֆիլտրի նվազագույն զտումը 80μm+38 μm, տաքացնող փոխակերման արտաքին շերտը 0,08մ2 , նոմինալ բացթողունակությունը արյան հոսքի 4 լիտր/րոպե, նյութը չժանգոտող պողպատից է, գործարանային ներկառուցված արտերիալ ֆիլտրով:

iv. Հավելված 1-ով սահմանվել է նաև, որ բնութագրերում գնման առարկայի առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին կատարված հղումների հետ միասին հասկանալ «կամ համարժեքը» բառերը:

v. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Մեգիէլ» ՍՊԸ-ն:

vi. «Մեգիէլ» ՍՊԸ-ն թիվ 1 հավելվածով՝ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ՝ կից

ներկայացնելով Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն թիվ 1.1 հավելվածի:

vii. «Մեգիէլ» ՍՊԸ-ն հայտի թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, Ընթացակարգի 3-րդ չափաբաժանի մասով առաջարկել է հետևյալ ապրանքը.

Առաջարկվող ապրանքի անվանումը	Արտադրողը և (կամ ապրանքային նշանը)	Տեխնիկական բնութագրերը
Օքսիգենատոր մեծահասակի	Liva Nova (Sorin)	Սրտի վիրաբուժության համար նախատեսված օքսիգենատոր գործարանային կոմպլեկտավորմամբ: Երակային մուտքի միացում պտտվող 360 աստիճան ½ դյույմ իր ադապտերով 3/8 դյույմ, երակի ելքի միացում 3/8 դյույմ, ռեզերվուարը 4500 մլ տարողությամբ, երեք տեսակի զտող համակարգ՝ երակային մուտքի զտում 80μm, արյուն/օդ մուտքի զտում 40μm, օդ/ արյուն զտում 40μm, ռեզերվուարը ամբողջությամբ ներսից PC (Phosphorylcholine) ծածկույթով՝ հարմարեցված VAVD- ի համար: Օքսիգենատորի տարողունակության ծավալը 219մլ, շփվող մասի արտաքին շերտը 1,75մ2 , մաքսիմալ արյան հոսքը 8,0 լիտր/րոպե, արտերիալ ֆիլտրի նվազագույն զտումը 41μm+38 μm, տաքացնող փոխակերման արտաքին շերտը 0,08մ2 , նոմինալ բաց թողունակությունը արյան հոսքի 4 լիտր/րոպե, նյութը պոլիուրեթան է, գործարանային ներկառուցված արտերիալ ֆիլտրով: Թթվածնի փոխանցում ՝ 4 լիտր/րոպե-290 մլ, Կարբոն դիոքսիդ՝ 4 լիտր/րոպե -210 մլ, ջերմափոխանակման գործոնը՝ 0,70 : Համարժեք Sorin Inspire 8F

viii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 11.12.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Մասնակցի կողմից 3-րդ չափաբաժնի համար ներկայացվել է համարժեք ապրանք, ինչով պայմանավորված, հանձնաժողովը, որոշել է նիստը կասեցնել և դիմել համապատասխան ծառայությանը համարժեքության մասով մասնագիտական կարծիք ստանալու համար:

ix. Հանձնաժողովի 17.12.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ կենտրոնի համապատասխան ծառայության կողմից ստացվել է մասնագիտական եզրակացություն, ըստ որի «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 3-րդ չափաբաժնով ներկայացված Sorin Inspire 8F մեծահասակի օքսիգենատորի մի շարք ցուցանիշներ չեն համապատասխանել հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին:

x. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և տեղեկացնել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 21.12.2020թ.-ին ժամը 12:00-ն շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

xi. Հանձնաժողովի՝ նախագահությամբ Ն. Մելիքյանի, 21.12.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Մեգիէլ» ՍՊԸ-ն ներկայացրել է իր կողմից ներկայացրած տեխնիկական առաջարկի պարզաբանում, միաժամանակ առաջարկելով

նաև այլ մոդելի ապրանքներ, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է կրկին դիմել համապատասխան ծառայությանը համարժեքության մասով մասնագիտական կարծիք ստանալու համար:

xii. Պատվիրատուի ղեկավարի՝ տնօրեն Մ. Ադամյանի, կողմից 22.12.2020թ.-ին կազմված թիվ 1156/1 հրամանով «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կազմում կատարվում է փոփոխություն, որի համաձայն՝ Հանձնաժողովի նախագահ է ընդգրկվում պատասխանատու պերֆուզիոլոգ Ա. Օհանջանյանը:

xiii. 24.12.2020թ.-ի, նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, նախագահությամբ՝ Ա. Օհանջանյանի, հիմք ընդունելով «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև բժշկական կենտրոնի համապատասխան ծառայության մասնագիտական եզրակացությունները, որոշել է մերժել «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու հիմքով:

xiv. «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 29.12.2020թ.-ին ներկայացրած բողոքի շրջանակներում Բողոքներ քննող անձն արձանագրել է, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 15-րդ կետի իմաստով Հանձնաժողովն ինքն է պարտավոր գնման առարկային համապատասխան գնահատել մասնակիցների որակավորումը և առաջարկները: Իսկ հարկ եղած դեպքում, եթե պատվիրատուի աշխատակազմի ներկայացուցիչները չունեն անհրաժեշտ մասնագիտական կարողություններ, ապա հանձնաժողովի կազմում ներառելու նպատակով հրավիրվում է համապատասխան փորձագետ (մասնագետ): Նման պայմաններում, մինչև «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կազմում Ա. Օհանջանյանի ընդգրկվելը, Հանձնաժողովի կողմից իրականացված գործողություններն, Ընկերության ներկայացված հայտի գնահատման մասով, եղել են ոչ իրավաչափ: Այլ կերպ ասած՝ եթե առկա է ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 15-րդ կետի դրույթների խախտում, ապա դրանից բխող ցանկացած գործողություն, ինքնաբերաբար դառնում է անհիմն կամ խախտմամբ կատարված:

xv. Բողոքներ քննող անձը 29.01.2021թ.-ի կայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/131 որոշմամբ որոշել է «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 29.12.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-

2020/131 ծածկագրով բողոքը բավարարել մասնակի, այն է՝ պարտավորեցնել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով բաց մրցույթի գնահատող դադարեցնել թիվ 5 արձանագրության 1-ին և 2-րդ կետերով կայացված որոշումները, իսկ մնացած մասով բողոքը մերժել:

xvi. Հանձնաժողովի 08.02.2021թ.-ի նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ ընացակարգի 3-րդ չափաբաժնի մասով իրականացվել է նոր գնահատում ինչի արդյունքում արձանագրվել է, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի հայտում հրավերով պահանջված բոլոր փաստաթղթերն առկա են, սակայն ներկայացված թիվ 1.1 հավելվածով առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին: Չեն համապատասխանում առաջարկի հետևյալ ցուցանիշները.

- օքսիգենատորի տարողունակության ծավալը 219մլ,
- շփվող մասի արտաքին շերտը՝ 1,75մ2,
- մաքսիմալ արյան հոսքը՝ 8,0 լիտր/րոպե,
- արտերիալ ֆիլտրի նվազագույն զտումը՝ 41 μm + 38 μm
- ջերմափոխանակիչի նյութը՝ պոլիուրետան (հիմք ընդունելով Մասնակցի կողմից Պատվիրատուին 21.12.2020թ. ներկայացրած գրությունը):

xvii. Նույն արձանագրության 3-րդ կետով Հանձնաժողովը որոշել է՝ օրենքով սահմանված կարգով մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, հաջորդ նիստը հրավիրել 09.02.2021թ.-ին ժամը 16:20-ին և տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը /09.02.2021թ., ժամը 16:20/ շտկել անհամապատասխանությունները:

xviii. Հանձնաժողովի 09.02.2021թ.-ի նիստի թիվ 8 արձանագրության համաձայն՝ սահմանված ժամկետում «Մեգիէլ» ՍՊԸ-ն ներկայացրել է գրություն և թիվ 1.1 հավելվածը, սակայն տեխնիկական ցուցանիշների արձանագրված անհամապատասխանությունների մասով բնութագրի շտկում չի իրականացվել, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է Ընկերության հայտը 3-րդ չափաբաժնով գնահատել անբավարար և մերժել՝ հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

xix. Հանձնաժողովի 12.02.2021թ.-ի նիստի թիվ 9 արձանագրության համաձայն՝ ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով հաղթող մասնակից է ճանաչվել «Լաէկա» ՀՁ ՍՊԸ-ին:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.02.2021թ.-ի թիվ 26/26/2126-2021 գրությամբ «Մեգիէլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության

անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով.

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ

օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը:

Նույն կետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է նաև ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա

նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է...:

«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 26.11.2020թ.-ին հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով բաց մրցույթի հրավերի (այսուհետ՝ Հրավեր) 8.8-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ,ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.8-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատաս-խանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 26.11.2020թ.-ին հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով բաց մրցույթի հրավերում ներառված պայմանագրի նախագծի հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 3-րդ չաւիաբաժնով պահանջվել է Եվրոսեթ Horizon AF Plus արտադրողի ու ապրանքային նշանի մեծահասակի օքսիգենատոր, ինչպես նաև սահմանվել է հետևյալ բնութագիրը. սրտի վիրաբուժության համար նախատեսված օքսիգենատոր գործարանային կոմպլեկտավորմամբ: Երակային մուտքի միացում պտտվող 360 աստիճան ½ դյույմ իր ադապտերով 3/8 դյույմ, երակի ելքի միացում 3/8 դյույմ, ռեզերվուարը 4500 մլ տարողությամբ, երեք տեսակի զտող համակարգ՝ երակային մուտքի զտում 80μm, արյուն/օդ մուտքի զտում 40μm, օդ/ արյուն զտում 40μm, ռեզերվուարը ամբողջությամբ ներսից PC (Phosphorylcholine) ծածկույթով՝ հարմարեցված VAVD- ի համար: Օքսիգենատորի տարողունակության ծավալը 225մլ, շփվող մասի արտաքին շերտը 1,65մ2 , մաքսիմալ արյան հոսքը 7,0 լիտր/րոպե, արտերիալ ֆիլտրի նվազագույն զտումը 80μm+38 μm, տաքացնող փոխակերման արտաքին շերտը 0,08մ2 , նոմինալ բացթողունակությունը արյան հոսքի 4 լիտր/րոպե, նյութը չժանգոտող պողպատից է, գործարանային ներկառուցված արտերիալ ֆիլտրով:

Հավելված 1-ով սահմանվել է նաև, որ բնութագրերում գնման առարկայի առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին կատարված հղումների հետ միասին հասկանալ «կամ համարժեքը» բառերը:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Մեգիէլ» ՍՊԸ-ն հայտի թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով,

Ընթացակարգի 3-րդ չափաբաժանի մասով առաջարկել է Liva Nova (Sorin) արտադրողի ու ապրանքային նշանի մեծահասակի օքսիգենատոր, ինչպես նաև ներկայացրել է հետևյալ բնութագիրը. սրտի վիրաբուժության համար նախատեսված օքսիգենատոր գործարանային կոմպլեկտավորմամբ: Երակային մուտքի միացում պտտվող 360 աստիճան ½ դյույմ իր ադապտերով 3/8 դյույմ, երակի ելքի միացում 3/8 դյույմ, ռեզերվուարը 4500 մլ տարողությամբ, երեք տեսակի զտող համակարգ՝ երակային մուտքի զտում 80μm, արյուն/օդ մուտքի զտում 40μm, օդ/ արյուն զտում 40μm, ռեզերվուարը ամբողջությամբ ներսից PC (Phosphorylcholine) ծածկույթով՝ հարմարեցված VAVD- ի համար: Օքսիգենատորի տարողունակության ծավալը 219մլ, շփվող մասի արտաքին շերտը 1,75մ2 , մաքսիմալ արյան հոսքը 8,0 լիտր/րոպե, արտերիալ ֆիլտրի նվազագույն զտումը 41μm+38 μm, տաքացնող փոխակերման արտաքին շերտը 0,08մ2 , նոմինալ բաց թողունակությունը արյան հոսքի 4 լիտր/րոպե, նյութը պոլիուրեթան է, գործարանային ներկառուցված արտերիալ ֆիլտրով: Թթվածնի փոխանցում ՝ 4 լիտր/րոպե-290 մլ, Կարբոն դիոքսիդ՝ 4 լիտր/րոպե -210 մլ, ջերմափոխանակման գործոնը՝ 0,70 : Համարժեք Sorin Inspire 8F

Հանձնաժողովի 08.02.2021թ.-ի նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ ընացակարգի 3-րդ չափաբաժնի մասով իրականացվել է նոր գնահատում ինչի արդյունքում արձանագրվել է, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի հայտում հրավերով պահանջված բոլոր փաստաթղթերն առկա են, սակայն ներկայացված թիվ 1.1 հավելվածով առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին: Մասնավորապես՝ չեն համապատասխանում առաջարկի հետևյալ ցուցանիշները. օքսիգենատորի տարողունակության ծավալը 219մլ, շփվող մասի արտաքին շերտը՝ 1,75մ2, մաքսիմալ արյան հոսքը՝ 8,0 լիտր/րոպե, արտերիալ ֆիլտրի նվազագույն զտումը՝ 41 μm + 38 μm, ջերմափոխանակիչի նյութը՝ պոլիուրետան (հիմք ընդունելով Մասնակցի կողմից Պատվիրատուին 21.12.2020թ. ներկայացրած գրությունը), ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է՝ օրենքով սահմանված կարգով մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, հաջորդ նիստ հրավիրել 09.02.2021թ.-ին ժամը 16:20-ին և տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը /09.02.2021թ., ժամը 16:20/ շտկել անհամապատասխանությունները: Հանձնաժողովի 09.02.2021թ.-ի նիստի թիվ 8 արձանագրության համաձայն՝ սահմանված ժամկետում «Մեգիէլ» ՍՊԸ-ն ներկայացրել է գրություն և թիվ 1.1 հավելվածը, սակայն տեխնիկական ցուցանիշների արձանագրված անհամապատասխանությունների մասով բնութագրի շտկում չի իրականացվել, ինչով

պայմանավորված Հանձնաժողովը որոշել է Ընկերության հայտը 3-րդ չափաբաժնով գնահատել անբավարար և մերժել՝ հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝

համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ

վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Սույն գործում առկա փաստերի՝ գնման ընթացակարգի հայտարարության և հրավերի ուսումնասիրության արդյունքում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջները պետք է հնարավորություն տան մասնակիցներին ճշգրիտ ընկալել գնման առարկան, ապահովեն մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերը ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ Պատվիրատուի կողմից, ներկայացված ընթացակարգի քննության ընթացքում չի ներկայացվել որևէ վերաբերելի ապացույց, առ այն, որ Հրավերի 3-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի չափորոշիչները համապատասխանում են առնվազն 2 արտադրողների բնութագրերին, այն որ սույն ընթացակարգի քննության առարկա հանդիսացող 3-րդ չափաբաժնի մասով նախատեսված տեխնիկական բնութագրի պայմանները չեն վերաբերում միայն Հրավերով պահանջվող Եվրոսեթ Horizon AF Plus արտադրողի ու ապրանքային նշանի մեծահասակի օքսիգենատորին, այլ նաև համապատասխանում են այլ արտադրողների անվանումներ:

Վերոգրյալները համադրելով գործում առկա փաստերին՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ստանձնած պարտավորությունների խախտմանը նպաստել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում առկա

թերությունը, այն է՝ ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով թիվ 3-րդ չափաբաժինի մասով սահմանված պայմաններն ու պահանջները վերաբերում են միայն մեկ արտադրող ընկերության անվանումներին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ թեև Մասնակցի կողմից հայտով ներկայացված թիվ 3-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքը չի համապատասխանում Հրավերի տեխնիկական բնութագրի 3-րդ չափաբաժնով սահմանված ապրանքի պայմաններին ու դրանով իսկ թույլ է տրվել ստանձնած պարտավորության խախտում, սակայն, այնուամենայնիվ «Մեգիէլ» ՍՊԸ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ՝ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, որն իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված («Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 26.11.2021թ.-ին հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով բաց մրցույթի 3-րդ չափաբաժնի մասով Պատվիրատուի կողմից Օրենքի 13-րդ հոդվածի պարտադիր պահանջների խախտմամբ պայմանավորված), հնարավոր չի եղել դրանք հասցնել իրենց տրամաբանական ավարտին, որպիսի պայմաններում բացակայում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վերջինիս մեղքի առկայությունը:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.02.2021թ.-ի թիվ 26/26/2126-2021 գրությամբ «Մեգիէլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2021/45 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**